Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 23-ի N 1158 - Ա որոշման

Նախագիծ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №3

Հայաստանի Հանրապետության երկաթուղային համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

«___» _____ 2014թ. քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ «Կոնցեդենտ»/, ի դեմս Հայաստանի Հանրապետության տրասպորտի և կապի նախարար՝ Գ.Բ.Բեգլարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. _____ թիվ ____ որոշման համաձայն, **«Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունը**, գրանցված Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, 0005, Տիգրան Մեծի 50 հասցեով, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Վ.Ի.Ռեբեցի / այսուհետ՝ «Կոնցեսիոներ»/ և **«Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերությունը**, գրանցված Ռուսաստանի Դաշնություն, 107174, ք.Մոսկվա, փ. Նովաք Բասմաննայա 2 հասցեով, ի դեմս նախագահ՝ Ո.Ի.Յակունինի /այսուհետ՝ «Երաշխավոր»/, հետագայում միասին՝ «Կողմեր» և առանձին՝ «Կողմ», կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին՝

1. Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու վերաբերյալ 2008թ. փետրվարի 13-ին կնքված կոնցեսիոն պայմանագրում /այսուհետ՝

«Կոնցեսիոն պայմանագիր»/ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

ա) Կոնցեսիոն պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդկությամբ նոր՝ 2-2.1-ին հոդվածով.

«Հոդված 2-2.1 Կոնցեսիոն ակտիվների դուրսգրումը և վաղաժամկետ վերադարձումը»

1. Ոչ պիտանի դարձած կոնցեսիոն ակտիվները կարող են դուրս գրվել, վաղաժամկետ վերադարձվել, ինչպես նաև փոխարինվել՝ համաձայն սույն Պայմանագրի №3 հավելվածում նշված Կարգի:

2. Ներդրումային ծախսերի պլանով /Պայմանագրի №1 հավելված/ նախատեսված միջոցների հաշվին Կոնցեսիոների կողմից ձեռք բերված գույքը մտնում է կոնցեսիոն ակտիվների կազմի մեջ՝ բացառությամբ Շարժակազմի:

3. Եթե կոնցեսիոն ակտիվների կազմում ընդգրկված օբյեկտը պահանջված չէ Կոնցեսիոների կողմից սույն Պայմանագրով իր պարտավորությունները կատարելու համար, Կոնցեսիոներն իրավունք ունի վերադարձնելու այն՝ համաձայն սույն Պայմանագրի №3 հավելվածում նշված Կարգի:

բ) Կոնցեսիոն պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 19-12-րդ հոդվածով.

«Հոդված 19-12 Իրավասությունների փոխանցում

1. Սույնով Կողմերը պայմանավորվեցին, որ սույն Պայմանագրի 2-3-րդ հոդվածի 1-ին կետում, 8-1-ին հոդվածի 6-րդ կետում և 9-4-րդ հոդվածի 1-ին կետում նշված Կոնցեդենտի իրավասություններն իրականացնում է Լիազոր մարմինը»:

գ) Կոնցեսիոն պայմանագիրը լրացնել №3 հավելվածով՝ համաձայն սույն Համաձայնագրի հավելվածի:

2. Կոնցեսիոն պայմանագրի 2010 թ. ապրիլի 30-ի №1 Համաձայնագրի և 2012 թ. մայիսի 4-ի №2 Համաձայնագրի գործողությունը տարածվում է 2008 թ. հունիսի 1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա: Սույն կետն ուժի մեջ է մտնում Կոնցեսիոն պայմանագրի 5-2-րդ հոդվածի համաձայն անկախ աուդիտորի եզրակացությունն ստանալուց հետո, եթե այդ եզրակացությունը հաստատում է 2008 թվականի հունիսի 1-ից մինչև 2012 թվականի մայիսի 4-ը ընկած ժամանակահատվածի համար Կոնցեսիոների կողմից լրացուցիչ վճարման անհրաժեշտության պարտավորությունների բացակայությունը:

3. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 /երեք/ բնօրինակից՝ հայերենով և ռուսերենով՝ յուրաքանչյուր Կողմի համար, ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և հանդիսանում է Կոնցեսիոն պայմանագրի անբաժանելի մասը: Ռուսերեն և հայերեն տարբերակների միջև հակասությունների առկայության դեպքում առաջնային է ռուսերեն տարբերակը:

Կոնցեդենտի անունից	**Կոնցեսիոների անունից**	**Երաշխավորի անունից**
ի դեմս Գ.Բ.ԲԵԳԼԱՐՅԱՆԻ	ի դեմս Վ. Ի. ՌԵԲԵՑԻ	ի դեմս Վ. Ի. ՅԱԿՈՒՆԻՆԻ
---	---	---

«Հավելված
13.02.2008թ. Կոնցեսիոն պայմանագրի
2014թ. _____ №3 Համաձայնագրի

Հավելված №3
Հայաստանի Հանրապետության
երկաթուղային համակարգը «Ռուսական
երկաթուղիներ» բաց բաժնետիրական
ընկերության կողմից ստեղծված
«Հարավկովկասյան երկաթուղի» փակ
բաժնետիրական ընկերությանը փոխանցելու
վերաբերյալ Կոնցեսիոն պայմանագրի

ԿԱՐԳ

Կոնցեդենտից, ի դեմս Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության, Կոնցեսիոների կառավարմանը փոխանցված Կոնցեսիոն ակտիվների դուրսգրման, վերադարձման և փոխարինման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կարգը սահմանում է 2008 թ. փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության երկաթուղային համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու վերաբերյալ Կոնցեսիոն պայմանագրով, ինչպես նաև 2008 թ. հունիսի 1-ի Կոնցեսիոն ակտիվների ընդունման-հանձնման ակտերով «Հարավկովկասյան երկաթուղի»

ՓԲԸ-ի /այսուհետ՝ Կոնցեսիոներ/ Կոնցեսիոն ակտիվների դուրսգրման, վերադարձման և փոխարինման հիմքերն ու կարգը:

2. Դուրսգրման, վերադարձման և փոխարինման նպատակով Կողմերը համաձայնել են, որ Կոնցեսիոն ակտիվները պայմանականորեն բաժանված են երեք խմբի՝

1) խումբ №1՝ Կոնցեսիոն ակտիվները, որոնք մինչև Կոնցեսիոն պայմանագրի գործողության ավարտը կամ վաղաժամկետ լուծումը ենթակա չեն դուրսգրման, վերադարձման կամ փոխարինման (դրանց թվին են պատկանում անշարժ գույքը, որո անհրաժեշտ է երկաթուղային ցանցի շահագործման համար (վարչական և արտադրական շենք-շինությունները, ենթակայաններ, կապի օբյեկտներ և այլն), շարժական գույքը և արհեստական կառույցները, որոնք ներառված են երկաթուղու շահագործման տեխնոլոգիական պրոցեսում).

2) խումբ №2՝ Կոնցեսիոն ակտիվները, որոնք կարող են վերադարձվել Հայաստանի Հանրապետությանը միայն Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության /այսուհետ՝ Լիազոր մարմին/ համաձայնեցմամբ (դրանց թվին են պատկանում անշարժ և շարժական գույքը, որոնք անհրաժեշտ չեն երկաթուղային ցանցի շահագործման համար, ներգրավված չեն երկաթուղու շահագործման տեխնոլոգիական պրոցեսում և դրանք վերադարձնելը բացասական ազդեցություն չի ունենա Կոնցեսիոն պայմանագրով Կոնցեսիոների կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար):

3) խումբ №3՝ Կոնցեսիոն ակտիվները, որոնք կարող են դուրս գրվել Կոնցեսիոների կողմից առանց Լիազոր մարմնի հետ համաձայնեցման (դրանց թվին են պատկանում ֆիզիկապես և բարոյապես մաշված, վերականգնման ոչ ենթակա և Կոնցեսիոն պայմանագրի կատարման համար չպահանջված արագամաշ և փոքրարժեք գույքը):

Սույն կետում նշված խմբերը ձևավորվում են Կոնցեսիոների կողմից և համաձայնեցվում Լիազոր մարմնի հետ՝ ոչ ուշ, քան 2015 թ. փետրվարի 1-ը:

3. Սույնով Կոնցեդենտը լիազորում է Կոնցեսիոներին իրականացնել մաշված և ոչ պիտանի դարձած՝ սույն կարգի 2-րդ կետի 3-րդ խմբում ընդգրկված Կոնցեսիոն ակտիվների դուրսգրումը՝ սույն կարգին և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերին համապատասխան:

4. Սույն կարգի 2-րդ կետի №2 խմբի Կոնցեսիոն ակտիվները վերադարձվում են Լիազոր մարմնի համաձայնությամբ՝ Կոնցեսիոների և Լիազոր մարմնի կողմից ստորագրված Կոնցեսիոն ակտիվների ընդունման-հանձնման ակտերի հիման վրա:

5. Վերադարձման ենթակա են Կոնցեսիոն ակտիվները (շենքերը, շինությունները, մեքենաները, սարքավորումները, տրանսպորտային միջոցները և այլ գույքը), որոնք պահաջված չեն Կոնցեսիոների կողմից Կոնցեսիոն պայմանագրով պարտավորությունների կատարման համար:

6. Վերադարձն իրականացվում է, եթե օբյեկտը՝

- պահաջված չէ Կոնցեսիոների կողմից Կոնցեսիոն պայմանագրով պարտավորությունների կատարման համար,
- չի մասնակցում երկաթուղային փոխադրումների տեխնոլոգիական գործընթացներում և դրա հետևանքով չունի հետագա օգտագործման հեռանկար:

Վերադարձման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումն ու Լիազորված մարմնին ներկայացումն իրականացնում է Կոնցեսիոները՝ կախված դուրս գրվող Կոնցեսիոն ակտիվի խմբից:

Կոնցեդենտի անունից Կոնցեսիոն ակտիվների վերադարձման վերաբերյալ առաջարկությունների քննարկման ու համաձայնեցման գծով պատասխանատու է Լիազոր մարմինը:

Կոնցեսիոն ակտիվների կազմից համապատասխան օբյեկտների վերադարձման համար փաստաթղթերի նախապատրաստումը կատարվում է սույն Կարգին համապատասխան:

7. Կոնցեսիոն ակտիվների կազմում փոխանցված գույքի (սույն կարգի 2-րդ կետի խումբ №2) վերադարձն իրականացվում է Լիազոր մարմնի համաձայնությամբ՝ սույն կարգին և կիրառելի օրենսդրությանը համապատասխան:

8. Ավտոտրանսպորտային միջոցների վերադարձման դեպքում հաստատված ակտի մեկ օրինակը Կոնցեսիոների կողմից փոխանցվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը՝ ավտոտրանսպորտային միջոցները հաշվառումից հանելու համար:

9. Փոխարինման ենթակա են բարոյապես և ֆիզիկապես մաշված, բայց արտադրական գործընթացի ու երկաթուղային ցանցի անխափան շահագործման ապահովման համար անհրաժեշտ Կոնցեսիոն ակտիվները (մեքենաները, սարքավորումները, տրանսպորտային միջոցները և այլ գույքը), որոնք ձեռքբերման հաշվետու տարում ընդգրկվում են Կոնցեսիոն ակտիվների կազմում և Կոնցեիսոն պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կամ լուծման դեպքում վերադարձվում են Կոնցեդենտին:

Կոնցեսիոն ակտիվների, որոնք ենթակա են փոխարինման սույն Կարգին համապատասխան, փոխարինում իրականացվում է Կոնցեսիոների կողմից դրանց դուրսգրման մասին Լիազոր մարմնի կողմից Կոնցեսիոներին գրավոր ծանուցման պահից վեց ամսվանից ոչ ուշ: Կոնցեսիոն ակտիվների փոխարինման մասին Կոնցեսիոներն առանձին հաշվետվություն է ներկայացնում Լիազոր մարմնին՝ փոխարինման իրականացման ֆինանսական տարվա ավարտից ոչ ուշ:

II. Կոնցեսիոն ակտիվների կազմում փոխանցված գույքի դուրսգրման համար փաստաթղթերի ներկայացման կարգը

1. Կոնցեսիոն ակտիվների վերադարձման նախաձեռնող է հանդիսանում Կոնցեսիոները, որի կառավարմանը/օգտագործմանը փոխանցված են Կոնցեսիոն ակտիվները:

III. Կոնցեսիոն ակտիվների կազմում փոխանցված գույքի վերադարձման համար փաստաթղթերի ներկայացման կարգը

1. Կոնցեսիոները նախապատրաստում և Լիազոր մարմնի քննարկմանն է ներկայացնում Կոնցեսիոն ակտիվների կազմում փոխանցված գույքի (սույն կարգի 2-րդ կետի խումբ №2) վերադարձման մասին առաջարկությունները և փաստաթղթերի փաթեթը՝ սույն Կարգին համապատասխան:

2. Փաստաթղթերի փաթեթը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝ կախված օբյեկտի կարգից՝

- վերադարձման հիմնավորումը,
- գույքագրման հաշվառման տվյալները,
- օբյեկտի տեղակայման հասցեն ու նկարագրությունը,
- տեղեկություններ հողամասի մասին, որի վրա տեղադրված է օբյեկտը, տվյալ հողամասում տեղակայված անշարժ գույքի օբյեկտների ընդհանուր թիվը, տվյալ օբյեկտի ու հողամասի նկատմամբ իրավահաստատող փաստաթղթերի առկայությունն ու վավերապայմանները,
- հաշվապահական հաշվառման տվյալներով օբյեկտի անվանման ու գրանցված օբյեկտի անվանման միջև տարբերության դեպքում, նշվում է օբյեկտի անվանումը՝ ըստ կադաստրային գործի և իրավունքի պետական գրանցման մասին վկայականի,
- կադաստրային գործի ու օբյեկտի պետական գրանցման վկայականի վավերպայմանները (ամսաթիվը, սերիան, համարը),
- օբյեկտի տեխնիկական ու շինարարական բնութագրերը (օբյեկտի ընդհանուր մակերեսը կամ երկարությունը, շենքի հարկայնությունը, շինարարության տարեթիվը),
- վերադարձման ենթակա օբյեկտի նշանակությունը (տեսակը) (վարչական, արտադրական, պահեստային և այլն),

- այն կոնկրետ պատճառների հիմնավորումը, ըստ որոնց գույքի օբյեկտը ենթակա է վերադարձման՝ նշելով ինչ նպատակների համար է օգտագործվել օբյեկտը, երբվանից և ինչու է դադարեցվել դրա շահագործումն, ինչ վիճակում է գտնվում օբյեկտը վերադարձման պահի դրությամբ,
- օբյեկտի արժեքի մասին տվյալները՝ ըստ հաշվապահական հաշվառման տվյալների:

IV. Կոնցեսիոն ակտիվների կազմում փոխանցված գույքի վերադարձման համար համաձայնություն ստանալու կարգը

1. Կոնցեսիոների կողմից ստորագրված վերադարձման համար առաջարկվող անշարժ ու շարժական գույքի օբյեկտների ցանկը, որը պարունակում է տեղեկություններ օբյեկտների անվանումների, գույքագրման համարների, արժեքային ցուցանիշների, թողարկման (շինարարության) ու հաշվապահական հաշվառմանն ընդունման ամսաթվերի մասին, ինչպես նաև փաստաթղթերի փաթեթ՝ ըստ սույն Կարգի II և III բաժինների, ուղարկվում է Լիազոր մարմնի քննարկմանը: Վթարային շենքերի, շինությունների փաստաթղթերին կցվում է նաև մասնագիտացված կազմակերպության կողմից տրված տեխնիկական եզրակացությունը:

Վթարների հետևանքով շարքից դուրս եկած շարժական գույքի և ավտոտրանսպորտային միջոցների փաստաթղթերին նաև կցվում է վթարի մասին ակտի պատճենը:

2. Լիազոր մարմինը 30 օրվա ընթացքում քննարկում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում դրանց տեղեկությունների ամբողջականությունն ու արժանահավատությունը և տալիս գրավոր համաձայնություն կամ հիմնավորված մերժում է օբյեկտների վերադարձման մասին Կոնցեսիոների առաջարկը:

3. Այն Կոնցեսիոն ակտիվներով, որոնց վերադարձը համաձայնեցված է Լիազոր մարմնի կողմից, Լիազոր մարմինը նախապատրաստում և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացնում Կոնցեսիոն ակտիվների կազմից տվյալ օբյեկտների հանման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախապատրաստման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Կոնցեսիոն ակտիվների կազմից օբյեկտները հանելու մասին որոշման ընդունումից հետո Լիազոր մարմինը նախապատրաստում է հանվող Կոնցեսիոն ակտիվների ընդունման-հանձնման ակտերը և դրանք ներկայացնում Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության ու «ՀԿԵ» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան հանձնաժողովների կողմից ստորագրմանը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ